ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 01

Գանձակ համայնքի ավագանու 2019թ. հունվարի 16-ի թիվ 1 նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի ավագանու 2019թ. հունվարի 16-ի թիվ 1 նիստի հետևյալ օրակարգը.

1/ Գանձակ համայնքի ավագանու 2019թ. հունվարի 16-ի թիվ 1 նիստի օրակարգը հաստատելու մասին

2/ Գանձակ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին

3/ Գանձակ գյուղական համայնքի 2019թ. տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը սահմանելու մասին

4/ Գանձակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

5/ Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող 17հա պահուստի վարելահողերի վարձավճարի չափի հաստատման մասին

6/ Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող 600հա արոտավայրերի վարձավճարի չափի հաստատման մասին

7/ Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը աճուրդ վաճառքով օտարելու և մրցույթով վարձակալության տրամադրելու, ինչպես նաև բնակավայրի կատեգորիայի հողատեսքերը աճուրդ վաճառքով օտարելու և դրանց մեկնարկային գները սահմանելու մասին

8/ Գանձակ համայնքի ղեկավարի 2019թ. աշխատավարձի դրույքաչափը սահմանելու մասին

9/ Գանձակի համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

10/ Գանձակ համայնքի 2019թ. բյուջեի հաստատման մասին

11/ Գանձակի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների տարեվերջյան գույքագրման արդյունքները հաստատելու մասին

12/ Գանձակ համայնքում իրականացված վարչական հսկողության ամփոփման արդյունքների մասին

13/ Գանձակ գյուղի թվով 2 բնակիչների դիմումները նրանց ֆինանսական օգնություն ցույց տալու մասին

14/ Գանձակ համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար X_____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 02

Գանձակ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի 2018թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

1/ Ըստ եկամտատեսակների.

ա. հողի հարկ 9624.7 կատարվել է 8377.6 հազ. դրամ 87.1 %

բ. շենք շինության հարկ 589.9-805.7 հազ. դրամ 136.6%

գ. փոխադրամիջոցներից հարկ 8046.8-10204.7 հազ. դրամ 126.8%

դ. տեղական տուրք 172.0-98.0 հազ. դրամ 57.0%

ե. հողի վարձավճար 893.6-390.0 հազ. դրամ 43.6%

զ. վարչական տուգանք և տեղական վճար 20.0-96.0 հազ. դրամ 480%

է. այլ գույքի վարձակալությունից մուտք 122.3 հազ. դրամ

ը. վարձավճար 6990.0-6172.1 հազ. դրամ 88.3%

2/ ընդամենը սեփական եկամուտներ 26337.0-26266.4 հազ. դրամ 99.8%

3/ ընդամենը եկամուտներ /դոտացիայով/ 101412.0-101341.4 հազ. դրամ 99.9%

4/ ծախսեր ընդամենը վարչական և ֆոնդային բյուջե 172549.4 հազ. դրամ, որից կատարվել է 171794.9 հազ. դրամ, ըստ օբյեկտների.

1	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ	48150.0	կատարվել է	48022.8
2	Տնտեսական հարաբերություններ	58696.5		58684.8
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն	6100.5		6096.5
4	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	9562.2		9552.2
5	Հանգիստ, մշակույթ և կրոն	4620.9		4571.0
6	Կրթություն	30494.6		30364.3
7	Սոց. հատուկ արտոնություն /օգնություն/	2385.0		2385.0
8	Պահուստային ֆոնդ	12539.2		12118.3

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար X_____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 03

Գանձակ գյուղական համայնքի 2019թ.տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը սահմանելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վարձավճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի տարածքում նոր շենքերի, շինություններիև ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 30000 դրամ.

ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 դրամ:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված

բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 100000 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար x _____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 04

Գանձակ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. <<Գանձակ գյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայությունների համար յուրաքանչյուր երեխայի համար ծնողական միջոցների դրույքաչափը սահմանել երեք /3000/ հազար դրամ, <<Գանձակի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի մեկ աշակերտի ուսման վարձավճարի դրույքաչափը երեք /3000/ հազար դրամ:

2. Աղբահանությունը համայնքում կատարել հետևյալ դրույքաչափերով.

1/ Ֆիզիկական անձանցից՝ մեկ շնչին -100 դրամ

2/ կրթական, մշակույթային, առողջապահական հաստատություններին՝ 1քմ-3 դրամ

3/ առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններին 1քմ-50 դրամ

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար X _____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 05

Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող 17հա պահուստի վարելահողերի վարձավճարի չափի հաստատման մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի վարչական սահմաններում գտնվող 17հա վարելահողերի 2019թ. վարձավճարի գումարը՝ 170.0 հազ. դրամ:

2.001 հա վարելահողի վարձավճարի չափը հաստատել 100 դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար X _____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 06

Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող 600հա արոտավայրերի վարձավճարի չափի հաստատման մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի վարչական սահմաններում գտնվող 600հա արոտավայրերի 2019թ. վարձավճարի գումարը՝ 600.0 հազ. դրամ:

2. Մեկ գլուխ խոշոր եղջրավոր անասունի արոտի վարձավճարի չափը հաստատել 1000 դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար X _____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 07

Գանձակ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը աճուրդ վաճառքով օտարելու և մրցույթով վարձակալության տրամադրելու, ինչպես նաև բնակավայրի կատեգորիայի հողատեսքերը աճուրդ վաճառքով օտարելու և դրանց մեկնարկային գները սահմանելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Տալ համաձայնություն, համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը օտարել աճուրդ վաճառքով և մրցույթով տրամադրել վարձակալության, ինչպես նաև աճուրդ վաճառքով օտարել բնակավայրի կատեգորիայի հողատեսքերը և սահմանել տվյալ հողատեսքերի վարձակալության և աճուրդ վաճառքների մեկնարկային գները՝

1/արոտավայր 1450.68հա 1հա-ի մեկնարկային գինը 2000 դրամ-/վարձակալություն/

2/ վարելահող 3-րդ կարգ 13.03հա 1քմ-ի մեկնարկային գինը 10 դրամ-/վարձակալություն/

3/ վարելահող 3-րդ կարգ 2.0հա 1քմ-ի մեկնարկային գինը 60 դրամ-/աճուրդ/

4/ վարելահող 4-րդ կարգ 7.826հա 1քմ-ի մեկնարկային գինը 10 դրամ-/վարձակալություն/

5/ վարելահող 5-րդ կարգ 7.734հա 1քմ-ի մեկնարկային գինը 10 դրամ-/վարձակալություն/

6/ բնակավայրի նշանակության հողեր 3.6հա 1քմ-ի մեկնարկային գինը 264 դրամ-/աճուրդ/

7/ գյուղ. նշանակության այլ հողատեսք 2.0հա 1քմ-ի մեկնարկային գինը 60 դրամ-/աճուրդ/

8/ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 1.2հա 1քմ-ի մեկնարկային գինը 264 դրամ-/աճուրդ/

2. Համայնքի ղեկավար Ա. Պողոսյանին՝ վերը նշված հողատեսքերի վարձակալության և աճուրդ վաճառքով օտարելու համար տալ համապատասխան հայտարարություն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար x_____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 08

Գանձակ համայնքի ղեկավարի 2019թ. աշխատավարձի դրույքաչափը սահմանելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Գանձակ համայնքի ղեկավարի 2019. աշխատավարձի դրույքաչափը սահմանել 365100 /երեք հարյուր վաթսուն հինգ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար X _____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 09

Գանձակի համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1.Հաստատել Գանձակ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների 2019թ. թվաքանակը - 49

2.Հաստատել Գանձակ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների 2019թ. հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

h/h	պաշտոնը	Պաշտոնի անվանումը ըստ ՀԾ օրենքի	հաստ. միավորը	դրույքաչափը	Բարձր լեռնային 20%	ընդամենը
1.	Համայնքի ղեկավար		1	365.1	8.0	373.1
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ		1	283.9	8.0	291.9

3.	Համայնքի ղեկավարի օգնական		1	172.3	8.0	180.3
	ընդամենը		3	821.3	24.0	845.3

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ

4.	աշխատակազմի քարտուղար	գլխ.պաշտ. /1-2-1/	1	247.6	8.0	255.6
5.	հողաշին. և քաղաքաշին.	գլխ. մասն. /2-3-1/	1	215.6	8.0	223.6
6.	հաշվապահ	առաջ. մասն. /3-1-1/	1	237.2	8.0	245.2
7.	ֆին. բաժնի մասնագետ	առաջ. մասն. /3-1-2/	1	210.2	8.0	218.2
8.	համակարգչ.օպերատոր	առաջ. մասն. /3-1-3/	1	210.2	8.0	218.2
9.	սպորտի, երիտ.ևառևտրի	առաջին կարգի մասն. /3-2-3/	1	172.3	8.0	180.3
10.	անասնաբույժ		1	121.4	8.0	129.4
	ընդամենը		7	1414.5	56.0	1470.5

ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

11.	տնտեսվար		1	121.4	8.0	129.4
12.	ջրմուղագործ /փականագործ/		1	71.7	8.0	79.7
13.	հավաքարար		1	78.0	8.0	86.0
14.	պահակ		1	71.7	8.0	79.7
	ընդամենը		4	342.8	32.0	374.8
	ընդամենը աշխատակազմ		14	2578.6	112.0	2297.7

ՄՇԱԿՈՒՅԹԻՏՈՒՆ

13.	տնօրեն		1	121.0	8.0	120
14.	գեղմասվար		1	102.0	8.0	110.0
15.	պահակ		1	72.0	8.0	80.0
	ընդամենը		3	309.9	24.0	333.9

ԳՐԱԴԱՐԱՆ

16.	գրադարանի վարիչ		1	71.7	8.0	79.7
17.	գրադարանավար		1	71.7	8.0	79.7
18.	հավաքարար		1	71.7	8.0	79.7
	ընդամենը		3	215.8	24.0	239.1
	ընդամենը գյուղապ. ապար.		20	3103.6	160.0	3263.6

<<ԳԱՆՁԱԿ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ

1.	տնօրեն		1	126.5	8.0	134.5
2.	հաշվապահ		1	100.0	8.0	108.0
3.	մեթոդիստ		0.5	72.0	4.0	76.0
4.	դաստիարակ		0.5	72.0	4.0	76.0
5.	դաստիարակ		0.5	72.0	4.0	76.0
6.	դաստիարակ		0.5	72.0	4.0	76.0
7.	դաստիարակ		0.5	72.0	4.0	76.0
8.	երաժշտության դասատու		0.5	72.0	4.0	76.0
9.	դաստիարակի օգնական		0.5	72.0	4.0	76.0
10.	դաստիարակի օգնական		0.5	72.0	4.0	76.0
11.	դաստիարակի օգնական		0.5	72.0	4.0	76.0
12.	դաստիարակի օգնական		0.5	72.0	4.0	76.0
13.	խոհարար		1	72.0	8.0	80.0
14.	լվացարար		0.5	72.0	4.0	76.0

15.	տնտեսվար		0.5	72.0	4.0	76.0
16.	պահակ		1	72.0	8.0	80.0
17.	բուժքույր		0.5	72.0	4.0	76.0
18.	օժանդակ բանվոր		0.5	72.0	4.0	76.0
	ընդամենը		18	1378.5	88.0	1466.5

<<ԳԱՆՁԱԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> *ՀՈԱԿ*

1.	տնօրեն		1	100.0	8.0	108.0
2.	հաշվապահ		1	87.0	8.0	95.0
3.	դաշնամուրի դասատու		1	72.0	8.0	80.0
4.	դաշնամուրի դասատու		1	72.0	8.0	80.0
5.	դաշնամուրի դասատու		1	72.0	8.0	80.0
6.	փողային գործիքներ		1	72.0	8.0	80.0
7.	պարի դասատու		1	72.0	8.0	80.0
8.	ուսմասվար		1	72.0	8.0	80.0
9.	գործավար		1	72.0	8.0	80.0
10.	վոկալի դասատու		1	72.0	8.0	80.0
11.	հավաքարար		1	72.0	8.0	80.0
	ընդամենը		11	835.0	88.0	923.0

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար X _____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 10

Գանձակ համայնքի 2019թ. բյուջեի հաստատման մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով և համաձայն << ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի 2019թ-ի բյուջեն.

1/ եկամուտների գծով՝ 116230.7 հազ. դրամ

2/ ծախսերի գծով՝ 116872.0 հազ. դրամ

3/ դեֆիցիտը՝ 641.3 հազ. դրամ

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտը՝ համաձայն հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

8. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրը՝ վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 640.7 հազ. դրամ և ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 0.6 հազ. դրամ՝ ընդամենը 641.3 հազ. դրամ:

9. համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից, որը սահմանվել է 24220.5 հազ. դրամ, ֆոնդային բյուջե հատկացնել 12029.7 հազ. դրամ:

10. Վարչական բյուջեի և ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից, որը կազմում է 641.3 հազ. դրամ ուղղել 04.02.1 գործառնական դասակարգման 5121 տնտեսագիտական հոդվածին՝ հացահատիկահավաք կոմբայնի արժեքը մասնակի մարելու համար:

11. Բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացված 12029.7 հազ. դրամից՝

1/ 3073.7 հազ. դրամը ուղղել 04.02.1 գործառնական դասակարգման 5121 տնտեսագիտական հոդվածին

2/ 946.0 հազ. դրամը ուղղել 04.02.4 գործառնական դասակարգման 5112 տնտեսագիտական հոդվածին՝ տեխ. հսկողության /790.0 հազ. դրամ/ և հեղ. հսկողության /156.0 հազ. դրամ/ աշխատանքների դիմաց վճարելու, 750.0 հազ. դրամը՝ նույն գործառնական դասակարգման 5134 տնտեսագիտական հոդվածին՝ նախագծանախահաշվային աշխատանքների համար

3/ 4320.0 հազ. դրամը ուղղել 06.04.1 գործառնական դասակարգման 5112 տնտեսագիտական հոդվածին՝ լուսավորության ցանցի կառուցման համար, 2940.0 հազ. դրամը՝ նույն գործառնական 5112 տնտեսագիտական հոդվածին՝ ֆակտորինգի մայր գումարի մարման համար:

12. Համաձայն << ՀՀ բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի՝

1/ թույլատրել համայնքի ղեկավարին կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև

2/ սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար նախատեսված ընդհանուր գումարի 15%-ը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար X _____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 11

Գանձակի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների տարեվերջյան գույքագրման արդյունքները հաստատելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների տարեվերջյան գույքագրման արդյունքները:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար X _____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 12

Գանձակ համայնքում իրականացված վարչական հսկողության ամփոփման արդյունքների մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Համայնքի ղեկավար Ա. Պողոսյանին.

1/ Համայնքի ղեկավարի աշխատակազմի գործավարության կարգը հաստատվել է համայնքի ղեկավարի 24.12.2018թ. թիվ 150 որոշմամբ

2/ Համայնքի շենքերն ու շինությունները համարակալվել են համայնքի ղեկավարի 24.07.2006թ. թիվ 5 որոշմամբ

3/ Համայնքի հաշվեկշռում եղած պետական և համայնքային սեփականության հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում սահմանված կարգով տրվել է հայտարարություն, սակայն հայտեր չներկայացնելու պատճառով համայնքի ղեկավարի որոշումներով տրվել է վարձակալության

4/ Ընդունել ի գիտություն և բացառել առանց նախագծման առաջադրանքի կառուցապատման նպատակով հողամասերի տրամադրումը, որի կազմում ներառվում են սեմաներ՝ հողամասով անցնող բոլոր ինժեներական գծերի նշումով /ջրագիծ, կոյուղագիծ, էլեկտրագծիծ, հեռահաղորդակցության գիծ և այլն/ սխեմաներ և տեխնիկական պայմաններ

5/ Ընդունել ի գիտություն և բացառել առանց տեխնիկական պայմանների /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում/ ՃՀԱ –ների տրամադրում

6/ Ընդունել ի գիտություն և բացառել առանց տեխնիկական պայմանների /հողամասի Մ1:500 սխեմա՝ հողամասով անցնող բոլոր, այդ թվում՝ ստորգետնյա ինժեներական գծերի նշումով /ջրագիծ, կոյուղագիծ, էլեկտրագծիծ, հեռահաղորդակցության գիծ և այլն/ ՃՀԱ –ների տրամադրում

7/ Սույն թվականի հունվարի 1-ից վարվում է թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյան և տրամադրվում է գերեզմանի վկայական

8/ Համայնքի ավագանու 25.09.2009 թ. թիվ 9 որոշմամբ հաստատվել հուղարկավորությունների հետ կապված մատուցվող վճարովի և անվճար ծառայությունների ցանկը

9/ Համայնքի ավագանու 25.09.2009 թ. թիվ 9 որոշմամբ կազմվել և հաստատվել է յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերը

10/ ընդունել ի գիտություն և գերեզմանատան սանիտարական գոտին համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N1910-Ն որոշման *նորմերին:*

2. Որոշման կատարման պատասխանատվությունը վերապահել համայնքի ղեկավար Ա. Պողոսյանին:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար x_____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 13

Գանձակ գյուղի թվով 2 բնակիչների դիմումները նրանց ֆինանսական օգնություն ցույց տալու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Նկատի ունենալով, որ Գանձակ համայնքի նշված բնակիչների տնտեսությունները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, ուստի հարգել նրանց խնդրանքը և Վինար Սարգսյանին տրամադրել 100000 դրամ, Գևորգ Սարգսյանին՝ 50000 դրամ օգնություն, ընդամենը 150000 դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

X

Համայնքի ղեկավար **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գանձակ, Հ. Բաղրամյան, 4

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 14

Գանձակ համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով.

համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Գանձակ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Գանձակ համայնքի տարեկան աշխատանքային պլանը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ղեկավար X _____ **ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**